

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի 2020 թ. դպրոցական
օլիմպիադայի մարզային (քաղաքային) փուլի
(տևողությունը՝ 150 րոպե)
(գնահատման քայլը՝ 0,25 միավոր)

9 - րդ դասարան

1. Ինչու՞ են Անտարկտիդայում առաջանում ուժեղ հոսքաքամիներ: Տարվա ո՞ր եղանակին են դրանք հատկապես ուժեղանում..... 2 միավոր
2. Ի՞նչ է աքվակուլտուրան: Ինչու՞ է դրա դերը գնալով ավելի կարևորվում.....2 միավոր
3. Ի՞նչ է գեյզերը: Որո՞նք են Երկրի վրա գեյզերների տարածման գլխավոր տարածաշրջանները2 միավոր
4. Գրե՛ք Արցախի Հանրապետության 8 քաղաքային բնակավայր (բացառությամբ մայրաքաղաքի)2 միավոր
5. Ի՞նչ է ձյան գիծը կամ սահմանը: Ի՞նչ բարձրությունների վրա է գտնվում ձյան գիծը աշխարհագրական տարբեր լայնություններում 2 միավոր
6. Տրված պետությունները դասավորե՛ք բնակչության թվաքանակի աճման կարգով՝ 1 միավոր
 1. Նիգերիա
 2. Մեքսիկա
 3. ԱՄՆ
 4. Թուրքիա
7. Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18°C է, իսկ գագաթին՝ 12°C : Ստորոտը գտնվում է ծովի մակարդակից 2400 մ բարձրության վրա: Որոշել լեռան հարաբերական և բացարձակ բարձրությունները (հաշվարկը կատարել 6°C -ով) 2 միավոր
8. Երկրի բնակչության թիվը 20 մլն է, գյուղական բնակչության թիվը՝ 4 մլն: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 300 000 է: Որոշել երկրի՝ ա) ուրբանիզացման մակարդակը; բ) ծնելիության գործակիցը: 2 միավոր
9. Գտե՛ք համապատասխանություն տրված սյունակների միջև 2 միավոր

Թերակղզի

1. Յուկատան
2. Մալակկա
3. Վալդես
4. Յուտլանդիա
5. Լեադունյան
6. Ապշերոնյան
7. Բրետան
8. Դրիմ

Պետություն

- ա) Ռուսաստան
- բ) Դանիա
- գ) Չինաստան
- դ) Արգենտինա
- ե) Ֆրանսիա
- զ) Մալայզիա
- է) Մեքսիկա
- ը) Ադրբեջան

10. Դուրս գրե՛ք Գերմանիային սահմանակից երկրների համարները՝

1 միավոր

- | | |
|--------------|------------------|
| 1. Իտալիա | 5. Հունգարիա |
| 2. Շվեյցարիա | 6. Նիդերլանդներ |
| 3. Դանիա | 7. Լիտվա |
| 4. Սլովակիա | 8. Լյուքսեմբուրգ |

11. Կազմե՛ք փոխկապակցված 4 զույգ
..... 1 միավոր

Պակիստան, դաոսիզմ, Եմեն, Չինաստան, սուննիզմ, Ճապոնիա, շիիզմ, սինթոիզմ:

12. Նշվածներից ո՞րն է տեխնիկական մշակաբույս է՝ 0,5 միավոր

- | | | | |
|-----------|---------------|-----------------|------------|
| 1. բրինձը | 2. արևածաղիկը | 3. եգիպտացորենը | 4. վարսակը |
|-----------|---------------|-----------------|------------|

13. Նշված գաճաճ պետություններից ո՞րը միապետություն չէ՝ 0,5 միավոր

- | | | | |
|------------|-----------|----------------|---------------|
| 1. Անդորրա | 2. Մոնակո | 3. Լիխտենշտեյն | 4. Սան Մարինո |
|------------|-----------|----------------|---------------|

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝

Ա. Թ. Գրիգորյան